



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասուրյուն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատմենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format


Adapt — remix, transform, and build upon the material

Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ԳՅՈՒՂԸ  
ԿՈԼԻՆՈԶԻ  
ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

ZUR MÆSTERPUS 1930  
ՕԵՐԵՎԱՆ





ԱՐԱՔՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

338.1Կ (08)

# ԳՅՈՒՂԱ ԿՈԼԽՈԶԻ

## ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

A I  
4359



ԹԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ՅԵՐԵՎԱՆ - 1930

Հրատ. 1428

Գրադ. № 5878 (ր). Պատվ. № 1136. Տիրամ 3000

---

Պետհրատի յերկըոբդ տպարան Յերևանում

## ԳՅՈՒՂԵ ԿՈԼԽՈՁԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

1. ԻՆՉՆ Ե ՆՈՐԸ ՄԵՐ ԳՅՈՒՂԱՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵԶ

Խոլխողներ.—Այսոր Խորհրդային իշխանության խոշորագույն հաջողություններից մեկն ել այն ե վոր զյուղը հիմնովին հեղաշրջվում ե. Նա դարձել ե փոթորկող ծով, ինչ յերեկ սրբություն եր կապված ֆեռողական հասարակակարգի և մանր բուրժուատան տրադիցիաների հետ կործանվում է։ Հոկտյական կոլխողային շարժմանը լծված չքավորության հետ նաև միջակները—աճրողջ շրջաններ, զյուղեր, նույնիսկ մարզեր կողիեկափացման են յենթարկում։ Հիմնովին փոխվում ե զյուղի անտեսական ձևերը։ Հնի փթած, ավերակների վրա կանգնում ե նոր սոցիալիստական զյուղը։ Բանկոր զասակարգի որինակով, աշխատանքի յերկրի բոլոր ծայրերից լսվում ե կոլխոզ կառուցող հաղարավոր բրիգադաների, սոցմբցման դուրս յեկող միլիոնների վճռական քաղերգ։

ՄԵԽԵՆԱՏՐԱԿՏՈՐԱՅԻՆ կայաններ.—Գյուղի հետագա զարգացման համար կառուցվում են հրահայտական մեքենաական ուժի կենտրոններ, մե-

քենատրակտորային կարաններ, վորոնք իրենց  
ազդեցության տակ են առնում, յերբեմն ամբողջ  
նահանգներ ու այդպիսով գյուղացուն ել նրա  
յարուից ու յեզից անցկացնում պրոլետարական  
նժույգ—տրակտորի վրա:

Սովորություններ.—Այս տեսակետից քիչ դեր չեն  
խաղում սովխոզները, մեր հետեւղական սոցիա-  
լիստական տիպի տնտեսությունները: Նրանց  
հարյուր հազարավոր հեկտարների վրա վոսկուն  
տվող առաերը, վերջնական կերպով ապացու-  
ցում են մեծ տնտեսության առավելությունը  
փոքրի առաջ, դրանով իսկ թաղելով բուրժուա-  
կան այն գիտությունը և «գիտնականներին»,  
վորոնք այսոր ել յերգում են կուլակի և մասն  
բուրժուական տնտեսության «անմահ» և «գիտական»  
լինելը: Սովխոզը լինելով քաղաքի պրոլետարիա-  
տի ներկայացուցիչը գյուղում, նրա հետ միա-  
սին տոն ե տալիս և առաջնորդում այն պրո-  
ցեսաներին, վորոնք աւարիվա մեր գյուղը հակա-  
լական քայլերով տանում են դեպի սոցիալիզմը:

Ալսպիսով կոլխոզները, սովխոզները, մե-  
քենատրակտորային կայանները լծված սոցիա-  
լիստական կառուցման հսկա շենքին, խիզախ և  
համարձակ կառուցում են այն, փշրելով և ջլն-  
ջելով շահագործող դասակարգի մնացորդներին  
կուլակին և չարչուն:

## 2. ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԸ ԴՅՈՒՂՈՒՄ

Եսի այս նոր հաստագի մասին ընկլ. Ստալինը զեռ մեկ տարի առաջ ասում եր՝ «Այժմ մենք հնարավորություն ունենք վճռական հարձակման դիմելու կուլտակի վրա, ջարդելու նրա ընդդիմացրությունը. նրան, վորպես զասակարգ վոչնչացնելու և նրա արտադրանքը փոխարինելու կուլյուզի և սովորողի արտադրանքով»։ Մեր կողխողները, մեր զյուղի աշխատավորությունը կարող են պարծենալ այդ կովում ունեցած հոյակապ հաջողություններով։

Տախտակ № 1.

Ամբողջ Միությունում  
Հայաստան

Թիվ	Կոլխոզների քանակը	Կոլխոզների անդամ. քանակը (ընտ.)	Տնտեսություն
1927	6	346	
1928	96	2253	491,800
1929	274	8220	1,900,000
1930	400	18100	5,929,000
1931	596 <sup>1</sup> / III 30	43700	11,490,000

Բայց այդ զեռ բավական չի, մեր առաջ

դրված եւ վաղվոն խնդիրների համար տարվելիք  
հսկայական պալքարի հարցերը. իսկ վաղվա խըն-  
դիրները քիչ դժվարություններ չունեն իրենց  
հետ: Ընկ Ստալինը 16-րդ համագումարում ա-  
սում եր՝ «Յերկու տարվա ընթացքում վերջաց-  
նելու հավերժացնել կոլեկտիվացման գործը մեր  
յերկրում»: Ահա այսպիսով չնայած կոլեկտի-  
վացման աննախընթաց հաջողություններին, խո-  
շորագույն խնդիրներ են մեր առաջ դրված: Հըս-  
կայական գյուղացիության նոր շերտեր կոլեկ-  
տիվը պետք ե կարողանա հանել կոլեկտիվաց-  
ման բարիկադների վրա և նրանց ուժերն ել  
կազմակերպված տանել սոց. արշավի, նրանց ել  
մասնակից պետք ե դարձնել սոցիալիզմի կա-  
ռուցման հոլակապ գործին: Նրանց ուժերը պետք  
ե մասնակից դառնան համաշխարհային հիդրայի  
բուրժուազիայի խորտակման գործին: Այս հար-  
ցերը մեր կոլխոզները կարող են լուծել ամենից  
առաջ, յեթե սրեն գյուղի ներսում գասակար-  
գալին պայքարը թշնամու—կուլակի, չարչու,  
նեպմանի, դաշնակի և նրանց իդուլոգիայի ար-  
տահայիչ աջ թեքման գեմ: Այդ պալքարը հաջող  
տանելու համար, ամենից առաջ կոլխոզները  
պետք ե լով կազմակերպված լինեն: Բառակ-  
չքափորական խմբակների կազմակերպված բու-  
կսիրով, մեր կոլխոզը և գյուղը պետք ե շարժ-

վեն տուած: Բոլոր կոլխոզներում բառբակչքավորական բառնցքը պետք է ուղղված լինի դյուզի գասակարգային թշնամու դեմ: այդ կըուվում լերբեք չթերազնահասել միջակին, մանավանդ կոլխոզի ներսում: Պետք է ամեն միջոց ձեռք առնել, այդ գծով նկատված թերությունները վերացնելու: Պետք է լավ հասկանալ, վոր բոլոր ամբացած բարձր տիսղի կոլխոզներում, միջակը բանվորի դաշնակից լինելուց, դառել և նրա հենարանը: Խոկ բանվորը թույլ չի տալ նրան հոշոտելու:

Զբավորական խմբակների ինքնաքննադատության տակ առնենք, նաև մեր աշխատանքի գիտցիության խախտազներին, բոլոր լոգբերին, ամեն մի վատ կոլխոզնիկի հասկացնենք, վոր նրանք կատարում են կոլխոզում մեր գասակարգային թշնամու կուլտակի ու գործը:

Վերջապես չքավորական խմբակներին դուրս բերենք այն պոկոզական և հավասարատենչ ձրգառությունների դեմ, վորոնք գմբախտաբար քիչ չեն մեր կոլխոզներում և քիչ ել չեն ողնում կուլտակի գործին: Դասակարգային պայքարի ներկանության ընկ: Մոլոտովի հետադա խոսքերը միաւ արյուն պետք ե գառնատ ամեն մի կոլխոզնիկի մեջ: «Դեպի կուլտակը յեղիք ինչպես քո ամենափոխերիմ և զես վերջնական չծեծված թշնամունք:

### 3. ԳՅՈՒՂԸ ՄԵՔԵՆԱՅԻ ՅԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ

Այս առաջիկա տարում կոլխողներին առաջադրվում է հետեւյալ կարևոր խնդիրները:

Առաջին հարցը, դա մեր գյուղի չքավորի և միջակի առաջ գիտության և տեխնիկայի դռների բացելու հարցն եւ: Մեր քաղաքը առաջ է դնում, կանգնում են հզոր ֆաբրիկաներ, և զավոդներ, տեխնիկայի վերջին խոսքով զինված՝ Մագնիտոսարոյ, Չելաբինսկ, Ստալինգրադի, Պուտիլովի, Նովգորոդի, Մոսկվայի, (Ամո). այդ զավոդների միջոցով մենք տիրագել ենք հողին, վորը «աստվածային» և «թագավորական» ուժով կուլակին եր տրված, ողին, յերկնքին, վորտեղ բուրժուական քաղքենու կարծիքով թափառում եր սպիտակամիբուք աստվածը: Մեր այրուանների վորոտից, այդ «հզորը» արդեն մեր յերկրի միլիոնավոր մարդկանց համար ընկել և մեռել եւ:

Բեռնթյան խավար ուժերից՝ սատանայից և աստծուց մարդուն ազատող այդ տեխնիկան գեռշատ քիչ եղ գյուղ մուտքը գործել. որինակ՝ կոմբայնը, կալսող մեքենան, տրակտորը և ուրիշ բարդ գյուղատնտեսական մեքենաները: Ֆե՛ ինչպես ել կարող ելին մտնել, բանվորի սաեղծած այդ բարիքները գյուղ, քանի վոր ամբողջ գյուղը

կոտր-կտոր արված թմբերով, պարխապներով  
նույնիսկ ակոպներով, իսկ խոշոր մեքենան, որի-  
նակ կոմբայնը այդ թմբերը չի սիրում, յերբ նա  
ցորենի գուկուն ափող արտն և մանում միաժա-  
մանակ հնձում, կապում, կալում, ծեծում, պայ-  
ման և զնում առաջին հերթին հարթել բուրժու-  
ական և ֆեոդոլական աշխարհից մնացած գյու-  
ղացան կաշկանգող այդ թմբերը Մեքենան գյու-  
ղացան ել բարձրացնելով տրակտորի, մալատիլ-  
կայի վրա, սովորեցնում և նրան, փոխանակ չու-  
թի և յեզան խելքով մտածելու գիտության վեր-  
ջին խոսքի՝ արակտորի և կոմբայնի խելքով մտա-  
ծել Ահա այդ կարեսը հարցն ե, վոր գյուղի լայն  
չքավորական և միջակային տարրերին ստիպում  
և գյուղում կազմակերպել, տեխնիկայի վերջին  
խոսքով սարքավորված խոշոր կոլխոզներ և  
սովիտովներ, վորոնք առաջնորդում են գյուղը և  
ցույց տալիս խոշոր անտեսության առավելու-  
թյունները մանրի հանդեպ:

Մեքենայի հետ կապված և նաև կուլտու-  
բական գյուղատնտեսությունն կազմակերպելու  
հարցը Անհատ տեսեսության մեջ չափազանց  
գժվար և մացնել գյուղատնտեսական այն բոլոր  
նորությունները, վորոնք կարող ելին բերքը կըրկ-  
նապատճել անդամ, քառականակել Գյուղարն-  
տեսական գիտությամբ պահած և կերակրած կո-

վերը, այժմ՝ 19—50 փութ յուղ են տալիս. իսկ մեր գյուղացու կովը դեռ մի փութ յուղին ե կանգնած տարեկան։ Այդ կուլտուրական կովերը համաձայնվում են մտնել միայն կուլտուրական գյուղը, խոշոր, տեխնիկայով զինված, ելեկտրականությունով լուսավորված։ Նույնը վերաբերվում է նաև հացահտափեկներին, բամբակին, ծխախոտին և այլն։

Սովետական յերկրի խոշոր տնտեսություններն են կոլխոզները և սովխոզները, վորոնք այդ խնդիրը լուծում են ճիշտ և մնացած գյուղացիության ել տանում այդ ճանապարհով։

Առաջիկու աշնան որերին, պետք ե ցուցահանել կոլխոզի մեքենաացած բռունցքը պետք ե պարծենալ այն հսկայական մեքենայական ուժով, վոր արդեն լցվել ե ու լցվում ե մեր գյուղը։

### Տախտակ № 2.

	1927	1928	1929	1930	1931
Տրակտորներ	52	102	131	267	589
Բարող մեքե-					
նաներ		2	3	24	78
Տրակտորներ	76	125	225	590	640

Բայց այդ դեռ քիչ ե, ինչ կլինի վաղը, յերբ

մեր Ստալինդրադի, Զեյլարինսկու, Խարկովի, Պուտիլովի, յերկաթե ծիյերը և գիդանտները վագեն կոլխոզ։ Ինչ կլինի, յերբ Նովգորոդի, Մոսկվայի, Ավտոգործարանների-ավտոները գան կոլխոզին ովհության։ Ինչ կլինի յերբ մեր «ուղարձանք» մանդապը փոխարինվի բատրակի արակառուղ—կոմբայնով։ Իսկ այդ որը հեռու չի։

Ահա թե ինչու ամեն մի կոլխոզնիկ, պետք է հասկանա և ապրի այն մեծ խնդիրներով, համառորեն հաղթահարի այն գժվարությունները, վորոնք կան կոլխոզի և գյուղի մեքենացման ճանապարհին։ Հուսահատվի մեր այսորվա գժվարություններից, զապի, սանձահարի, իսկ յիթե կարիք կա տրորի այն չարանենդ թշնամիներին, վորոնք վարկարեկում են մեր մեծ գործը։ Բոլոր ուժերով լծվի հնդամյակը չորս տարում կատարելու գործին։

#### 4. ՀՈՒՄՈՒՅԹ ՏԱՆՔ ՖԱԲՐԻԿԱՅԻՆ, ԶԱՎՈՐԻՆ

Մեր գյուղին մեքենա մաստկաբարուղ ֆաբրիկային և զավողին, վոչ մի կասկոծ չի կարող լինել վոր պետք և ապրանք տալ. մեր գործարանը կարիք և զգում բամբակի, կաշվի, վուշի և առհասարակ տեխնիկական կուլտուրաների։ Փոքր անտեսությունն այդ չի կարողանում տալ կամ տալիս և շատ ցածր վորակի ու թանգ. հե-

տեղանքն ել այն ելինում, վոր մեր կոլխոզն ել ստանում եքաղաքից թանգ գներով ապրանք:

Այս առաջարիզում պարծենալու քիչ բան չունեն մեր կոլխոզները. թող դրանցով հաշվի նստեն մեր տեխնիկական կուլտուրաների կոլխոզները, միաժամանակ պատրաստվեն այդ գծով նոր արշավի:

### Տախտակ № 3 (ցանկները հեկտարներով)

Թվեր.	Բամբակ	Ծխախոտ	Խաղող.
1927	25	5	12
1928	110	10	97
1929	1010	20	340
1930	4632	321	1679
1931	15.000	1050	3144

Կոլխոզները, ֆաբրիկային պետք են հաշվի տան, ինչ են կատարել այդ գծով, ինչ թերություններով և ինչ ել մտադիր են կատարելու: Իսկ կոլխոզի առաջ զարգացող ֆաբրիկան և զավոդը շատ մեծ պահանջներ են գնում: Ինչու պետք են մենք նեղություն կրենք կտորի, կոշկի, չուտի և այլն: Իսկ յերբեմն ել բոլորովին անտեղի բողոքենք ֆաբրիկայից: Այժմ ամեն մի կոլեկ-

տիվ և կոլեկտիվիստ իրենց հարց թող տան,  
կատարել են ամեն ինչ, այդ կրիզիսը վերացնելու, ինչքան բամբակ են տվել և տալու ֆարբիկային, ինչքան բուրդ ու կաշի և այլն:  
Դամ ինչքան են խոշորացը կոլխոզները ալդմեծ  
նորատակի համար: Ամեն մի կոլխոզ թող հաշիվ  
տա զյուղի և յերկրի առաջ, թող բապորտ տա  
աշխատավորների պետությանը. կատարել ե ար-  
դյոք այն բոլորը ինչ վոր իրենից և կախված:

### 5. ԼՈՒԾԵՆՔ ԿԵՆՍԱՄԹԵՐՔԻ ՀԱՐՑԸ

Վոչ մեկիս համար գաղտնիք չե, մեր Սովետական յերկրի բանվորը, թեկուզ զյուղի բատ-  
րակները նեղություն են կրում, մսի, կաթի,  
պանրի, հացի և այլն մթերքների պակասից: Այդ  
հարցի զլխափոր պատճառն մեր յերկրում գլու-  
զական անտեսությունների մանր լինելն ե հե-  
տամնաց լինելն ե, իսկ մանր տնտեսությունը  
իրեն չի կարողանում պահել, ուր մնաց շուկա-  
յին կենուամթերք տա: Այդ հարցի լուծման հա-  
մար, կամ պետք է հանդես գա կուլակը, նա իս-  
կապես «հանդես յեկավ», բայց վոչ թե ապրանք  
տալու, այլ այն վոչնչացնելու. այլ կերպ չեր ել  
կարող լինել: Աշխատավորության թշնամին, խոշոր  
և մանր յեղջուրավոր անտառները վոչնչացնելու  
գծով եր փորձում սովետական կառավարության  
կով կովել. հետևապես ֆարբիկան այդ տիպի

տնտեսությունների վրա հեճավել չեր կարող ի՞նչ-  
պես կլինի քաղաքում սոցիալիստական տնտե-  
սություն, իսկ դրան հումույթ պետք է մատա-  
կարարի գյուղի կուլակը. այդ դուրս կդա գլուխ  
սովետական իսկ վոտներ կուլակային։ Այդպես  
կարող են մտածել միայն աջ ոպալորտյունիստ-  
ները և բուրժուական ֆիասարարները։ Ահա այդ  
պատճառով ել պետք եւ ստեղծել խոշոր ֆաբրի-  
կա-կոլխոզներ, մսի, պանրի, հացի կաթի. այդ  
ֆաբրիկաներում պետք եներգրավել գյուղի ամ-  
բողջ աշխատավորական ելեմենտները, պետք եւ  
մեծացնել, ուժեղացնել այդ ֆաբրիկաները, բո-  
լոր հնարավորությունները ոգտագործելով, վոր-  
պեսզի Սովետների յերկրի՝ բանվորն ու գյու-  
ղացին լող տան կաթի, մեղրի, մսի, մրգեղինի  
և այլ կենսամթերքների մեջ։

Այդ գծով ել ունենք վորոշ հաջողություններ։ —

#### Տախտակ № 4.

Թվեր	Կովեր.	Վոչխար այծ	Խոզ	Փեթակ	Հացաբույսեր. հեկտարով
1927	104	1196	51	58	208
1928	772	6216	61	365	968
1929	3274	15700	960	2500	5,824
1930	11276	47652	5300	3700	34,210
1931	29100	86819	22400	9800	74,540

Բայց մեր կոլխոզները ավելի շատ անելիք ունեն այդ ֆրոնտում։ Ամեն մի կոլխոզ իր առաջ խնդիր պետք է գնի, առաջիկա յերկու տարվանը, նայած կոլխոզի ուղղությանը ստեղծի խոշոր կաթնահամեստական ժերմանից, վորոնք ամենաքիչը կունենան 300-ից ավելի կթի կովեր։ Բոլոր անասնապահական կոլխոզները այժմվաճանից պետք է լուծեն այդ խնդիրները, ներդրավեն լայն միջակային տարրերին համայնացնեն կոլխոզնիկների կովերը և այդ ուղղությամբ մորլիզացիայի յենթարկելով կոլխոզի միջոցները միանգամայն հնարավոր են մեր լեռնամասին բոլոր կոլխոզները, վեր ածել խոշոր ապրանքային յելութ տվող կոլխոզների Դրա հետ միասին այդ գոտում առանձին ուշը պետք է գարձնել խոզաբուծություններ, յուրաքանչյուր 200 ընտանիքից։ Արդպիսով առատանան մոռվ մեր կոլխոզները և հնարավորություն ունենան խոշոր քանակությամբ միս տալ՝ Բագվին, Թիֆլիսին, Յերևանին։ Մեր կոլխոզները՝ Դիլիջանի, Իջևանի առհասարակ, Լոռու անասնապահական շրջաններում, խոշոր պերսպեկտիվներ ունեն կոլխոզնիկները թող խթան հանգիսանան այդ խոշոր մասի և կաթի կոլխոզների ստեղծման։

Նույնը կարելի յե ասել նաև հավաբուծության մասին։ Մեր գետափնյա, ինչպես Աղափառ-սի, Ախտալի և Կոտայքի շրջանները — ամբողջ Սևանա լճի շուրջը գտնված հացահատիկային կոլխոզները, հսկայական արդյունք կարող են ստանալ խոշոր հավաքուծության՝ սագերի, բա-դերի տնտեսություն ստեղծելով։ Այդ գյուղերում յեղած հացահատիկը, կարող ե հարյուր-հազա-րավոր թևերով թռչուն պահել. իսկ մեր գործա-րաններն ել տալիս են ինկուբատորներ. լարվելու դեպքում՝ մեր այդ կոլխոզները ինչքան ասեք միս կարող են տալ քաղաքին։

Միայն թե ամեն մի կոլխոզ վոչ թե խոս-քով այլ գործով, գործնական աշխատանքով պետք ե լուծի ալդ խնդիրները։

Մի քանի խոսք ել վոչխարաբուծության մասին։ Հայաստանի ամբողջ հարավ-արեւելյան արոտատեղերը կարելի յե զբաղեցնել վոչխար-ներով։ Վորտեղ մնացած կենդանիները ավելի քիչ մննունդ կգտնեն, ինչու այդ չկատարեն մեր կոլ-խողները, ինչու մեր կոլխոզներից, գոնե տասը հիմք չդնեն խոշոր վոչխարաբուծական արև-տեսության. յուրաքանչյուրում՝ 1,500 գլխից ավելի։

Մեղվաբուծությունը նույնպես հրաշալի պերսպեկտիվներ ունի, մեր մի շարք շրջանները

իրենց մշտական բերքով, խոշորագույնն խոստումներ են անում ինչպես՝ Ախտայի, Կարմիր-Հովտի, Լոռի-Փամբակի շրջանները: Ինչու համապատասխան ընթացք չտան այդ ճյուղին մեր կրթխողները:

Այս բոլորը միանգամայն հնարավոր ձեռնարկումներ են. մեր կոլխոզները հիմնովին պետք է զբաղվին այդ խնդիրներով. պետք է կոլխոզի և դյուզի մաքսիմալ հնարավորությունները մորիլիզացիայի յենթարկել այդ անտեսությունների կազմակերպման գործում: Այդ նոր ձեռնարկումներին քիչ չի ոգնում նաև կառավարությունը (առև տախտակ № 5):

Առաջիկա տարին թող լինի մեր մեծ քննության տարին և ամեն մի կոլխոզը բազ ընորոշի իր զարգացման ճշգրիտ ուղին: ճամաձայն շրջանի զարգացման պերսպեկտիվային ծրագրին թող սա լինի փոխանցիկ մի շրջան մեր կոլխոզների համար, կոլխոզները թող ընարեն դյուզանահասական մի հիմնական ճյուղ, ապահովելով այն ռեալ և կոնկրետ միջոցներով և ձեռնարկումներով: Շտապել և հարկավոր, յերկրի ներսում ֆարբիկաների և կոլխոզների զարգացման հետ, կենսամթերքի պահանջը չտեսնաված թափով զարգանաւով և իսկ կուլակի վաճարագործ ձեռքը զեռ շարունակում և աշխատել, ամեն որ վոչնչացնելով բազմաթիվ կենդանիներ:

Տախտակ № 5. Վարկիր ռուբլիներ

<i>թիվ.</i>	<i>Սեպտ-</i> <i>մարտ</i>	<i>Գյուղա-</i> <i>գոտինե-</i> <i>գոտինե</i>	<i>Ահասահա-</i> <i>ների</i>	<i>Շնչարերի</i>	<i>Ազգայի-</i> <i>գոտինե</i>	<i>Հայոցա-</i> <i>մարտ</i>
1927	16,000	15,000	17,000	—	3,000	51,000
1928	48,000	44,000	101,000	116,000	19,000	328,000
1929	389,000	321,000	451,000	384,000	152,000	1,697,000
1930	375,000	542,000	750,000	771,000	573,000	3,011,000
1931	458,000	931,000	453,300	4,916,000	1,162,000	12,000,000

Այս կարեոր ասպարիզում ել խփենք կու-  
լակին և դուրս շպրտենք սրան դիրքերից:

## 6. ԿԱԴՐԵՐԻ ՀԱՐՑԸ

Ամեն մի որ աշխատելով կոլխոզում մեր  
զյուղի բատրակները, չքավորները, միջակ գյու-  
ղացիները, վերատեղծվում, վերածվում են այն-  
ովիսի լեղեռների, վորոնց մինչև այժմ միայն  
ֆարբիկան կարող եր տալ. այդ լեղեռներն ել  
իրենց հերթին զյուղին առաջնորդում են գեղի  
բավարարություն ապագանո Բայց այդ բավական չե,  
որսակտիկ գիտելիքների հետ. մեր կոլխոզնիկնե-  
րին հարկավոր ե նաև թեորիան, նրանց հարկա-  
վոր ե հսկայական քանակությամբ, տեխնիկա-  
կան կազրեր, ազգանոմներ, ինժեներներ, միջին  
հրամանատարական կազմ—տեխնիկներ, կտղմա-  
կերողիչներ: Մասսայական քաղլուսվարական այն-  
ովիսի մի ցանց, վոր վողողի ամբողջ կոլխոզ-  
ներին:

Վերին հրամանատարական կազմը պատրաս-  
տում է կառավարությունը, վորքան հաջող ե  
պատրաստում, այդ ցույց ե տալիս, այն հսկա-  
յական համալսարանների ցանցը, վոր ունենք  
Սալիկական Միության մեջ: Յարի ժամանակ  
ամբողջ Ռուսաստանը ուներ 10 համալսարան.

իսկ այժմ՝ միայն Հայաստանի սահմաններում ունենք 8 համալսարան. չհաշված այն հարյուրավոր տեխնիկումները, վորոնցով լցված ենույն իսկ մեր յենթաշրջանները (տես տախտակ Ն 6):

Կոլտնտցանցն ել վորոշ գործ կատարել են այդ գծով:

Մեկ տարվանը հազարավոր կոլխոզնիկներ պետք են անցնեն մեր կուլտ-կրթական ցանցերով. բոլոր կոլխոզնիկների անգրագիտությունը պետք է վերացնել մեկ տարվա ընթացքում՝ իսկ հարյուրավորներին համալսարան ուղարկել. այն հաշվով, զոր մեր յերկրի ներսում առաջիկա հրնագամյակում կոլխոզնիկ չլինի, վորը տրակտորի մեջըին նստել չկարողանա:

## 7. ԿԵՆՑԱՂԻ ՀԱՐՑԵՐԸ

Կոլխոզը պետք է լինի գլուղի նոր կենցաղի դարբնոցը. այստեղից պետք են սկիզբ տանեն և վողողեն ամբողջ գյուղը, սոցիալիստական կենցաղային այն քջիջները, վորոնք նախ մարդկարին հասարակակարգի կեսի գեղջկուհու սորմակական շքթաներն են փշրում. իսկ դրա հետ միասին դաստիարակում նոր ազատ հասարակակարգի ազատ մարդը. Այդ քջիջները կոլխոզի մանկական մսուրներն են, մանկապարտեզները, հրապարակները, ճաշարանները, ակումբները և այլն:

## Տավասակ № 6

	<i>1930</i>	<i>P.</i>		<i>1931</i>	<i>P.</i>
<i>Shaqm-</i> <i>թիւնը</i>	<i>Shaqm-</i> <i>թիւնը</i>			<i>Shaqm-</i> <i>թիւնը</i>	
<i>մկանաժ</i> <i>թիւնանք</i>	<i>մկանաժ</i> <i>հանդիսալ</i>			<i>մկանաժ</i> <i>թիւնանք</i>	
<i>կողմանական կարգ</i> <i>կառավարների</i>	<i>կողմանական կարգ</i> <i>կառավարների</i>	<i>3</i>	<i>1—½ und.</i>	<i>150</i>	<i>4</i>
<i>գյուղականական գործ</i> <i>առկան գյուղերի</i>	<i>գյուղականական գործ</i> <i>առկան գյուղերի</i>			<i>36</i>	<i>1½—1 und.</i>
<i>զարգացման գործ</i> <i>զան ձևողերի</i>	<i>զարգացման գործ</i> <i>զան ձևողերի</i>	<i>10</i>	<i>½ und.</i>	<i>1,500</i>	<i>1,780</i>
<i>շարժառարների</i> <i>Ազգ գործնական պատճեն</i>	<i>շարժառարների</i> <i>Ազգ գործնական պատճեն</i>	<i>10</i>	<i>1—½—2½</i>	<i>350</i>	<i>7</i>
<i>լեռ գործնական պատճեն</i>	<i>լեռ գործնական պատճեն</i>	<i>7</i>	<i>5—15 որ</i>	<i>320</i>	<i>6</i>
<i>Ըստ պահանջների՝</i>		<i>30</i>	—	<i>2,320</i>	<i>53</i>
					<i>3,520</i>

Այժմ՝ դեռ գյուղի հետամնաց մասը, կուլակների առաջնորդությամբ կովում եւ դրանց դեմ. բայց վաղը նրանց ժառանգներն անգամ յերախտապարտ կհամարեն իրենց բանվորի առաջ, վոր արտպես խստությամբ ու վճռականությամբ դասակարգերը վոչնչացնելով, բանվորը գրուղն ել տանում սոցիալիզմ՝ ճանապարհով:

Իզուր չի դասակարգային թշնամին իր նետերը ուղղում կենցաղային հարցերի վրա. իզուր չե կուլակը ամեն տեսակ անեկդոտներ հորինում նոր կենցաղը վարկաբեկելու։ Պատահական չե գլուղի ամբողջ տգետ հետամնաց ու խավար ուժերը մասնակցում են կուլակի առաջնորդությամբ կենցաղային հարցերի դեմ. նույնիսկ չեն խնայում իրենց այլանդակված ընտանիքի պատկերով նկարագրել կոլխոզի ընտանիքին։ Այս ապարիզումն ել կոլխոզանցի կողմից կատարված ե դրական աշխատանք.

### Տախտակ № 8.

1930 թ.      1931 թ.

Մանկապարտեղ	54	104
Մանկահրապարակ	—	400
Մսուր յերեխաների	7	65
Կարմիր տնկյուն	16	230
Պատի թերթեր	65	450

Դաշտի ճաշարան	—	200
Խրճիթ-ընթերցարան	14	74
Ըսդհանութ ճաշարան	5	10
» հացատուն	—	20
Գրադարան	—	230
Ռազմական	—	15

Բայց նոր և նոր գրոհի պետք եւ գնան մեր գեղջկուհի կոլխոզնիկները, նրանք ռեալ միջոցներով պետք եւ ապահովեն ամեն մի կոլխոզին մի մանկամասութով, դա միայն ռեալ միջոց կլինի, գեղջկուհու ազատագրման։ Դա միայն հնար կտա մարդկային մեծ կեսի աշխատանքը մասնակից դարձնել սոցիալիզմի կառուցմանը։

Կոլեկտիվացման այս տարվա աշխատանքները ցույց տվին ինչ խոշոր գեր կարող եւ խաղալ գեղջկուհի կոլխոզնիկը—կոլխոզ կառուցման ասպարիզում։ Նրանց համերաշխ բրիգադների աշխատանքով քիչ կոլխոզներ չեն անցել որենակելիների շարքերը։

Այս առաջիկա տարին պետք եւ կոլխոզնիկները դարձնեն մորիլիզացիայի տարի, բոլոր աշխատավոր գեղջկուհիներին կոլխոզի մեջ կամ նրանց շուրջը ներգրավելու։ Բոլոր կոլխոզները աշխատանքի շրջանում պետք եւ ապահովված լինեն կենցաղային մի շարք հիմնարկներով։

## 8. ՍՈՑՄՐՑՄԱՆ ՅԵՎ ՀԱՐՎԱԾԱՅՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սոցիալիզմը կառուցել առանց մասսաների, կամ մեր յերկրի հաջողությունները չկապել բանվոր դասակարգի ինքնաքննադատության և նրա ստեղծագործության հետ. դա յեթե չասենք տըդիտություն՝ գոնե պետք ե ասել բուրժուական թեքում։ Ինչու յե մեր արդյունաբերության տեմպը արդարիսի սրարշավ, աննախնթաց քայլերով. ինչու յե մեր յերկրի նախատեսված բոլոր տեմպերը ժամանակից շուտ կատարվում. նույնիսկ հնգամյակը չորս տարում կատարելու լողունգը պիոներները զիտեն։ Ի՞նչու մեզ մոտ Հայաստանում չնայած կոլեկտիվացման ասպարիզում թույլ տված մեր սխալներին, կոլեկտիվացման հնգամյակը գերակատարվում է առաջիկա տարում։ Միմիայն և միմիայն բանվոր դասակարգի և կոլխոզնիկների ստեղծագործությամբ և արտադրության ղեկավարելով պետք ե բացատրել մեր բոլոր հաջողությունները։ Միլիոնավոր մրցակցող խմբակներ, հազարավոր հարվածային գործարաններ, հազարավոր մրցակցող կոլխոզներ, սոցմրցման նոր ձեր՝ հանդիպող պլանը՝—գործարան, գավող մտցնելով ե մեր յերկիրը արշավում դեպի փայլուն առլազան։

Ինչու բուրժուական յերկրներում այդ տեմպը չկա՞ ։ Նույնիսկ ավերող կրիզիսը ահա մի տարի յե կրծում ե ամենառուժեղ կապիտալիստական յերկրների սիրտը, միլիոնավոր բանվորներ՝ փողոց են շպրավում անգործ, մի կտոր հացից զուրկ այն ժամանակ յերբ մեր յերկրում դըրքած է հարց, վոչ մի անգործ մարդ չունենալ ոյս տարում։

Իսչով բացատրել այդ բոլորը՝ ամենից առջ այդ յերկրներում չկա բանվորագյուղացիական իշխանություն, այնտեղ չկա բանվորի զիկտատուրան, այնտեղ մարդկային լայն զանգվածները չեն ղեկավարում ու կազմակերպում արտագրությունը։ Ալդքանը միայն բավական ե, վորպեսզի մեր կոլխոզները և կոլխոզնիկները հասկանան, ավելի ուժեղ լծվեն կոլխոզշինարարության աշխատանքների կազմակերպմանը, այն ձեռքով, ինչպես քաղաքի բանվորն ե կատարում։

Դրա համար ել թող ամսն մի կոլխոզ և կոլխոզնիկ հարցնի իրեն, արդյոք կատարել ե այն բոլորը, վորպեսզի ապահովի կոլխոզի արտգ վերելքը, արդյոք մասնակցել ե մի վորեե սոցմրցման, հարվածայնության, հանդիպող պըլանների կատարման քննության։

Լայն կոլխոզային մասսաներով սոցմրցման, հարվածայնության մասնակցելով կոլխոզը կկա-

ըրողանսա դեպի իրեն քաշել բոլոր կոլխոզից դուրս  
մնացած, այսոր կոլխոզ չմտնող, բայց վաղվան  
կոլխոզնիկ անդամ գյուղացիներին. այսպիսով  
համերաշխ քաղերով ամբողջ գյուղով, չարդված  
կուլակի դիակի վրալով, կողեկտիվացված գյու-  
ղը պետք ե անցնի դեպի սոցիալիզմը:

Այս աշնան որերը թող կոլխոզները դարձնեն  
մասսայական վերելքի լայն գյուղատնտեսա-  
կան գիտելիքների ուսուցման, կողեկտիվի  
շարքերը նոր հազարների ներդրավման, կուլա-  
կին վորպես դասակարգ չոչնչացնելու որեր:

## 9. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵՆՔ ԲԱՅԼՇԵ- ՎԻԿՈՐԵՆ

Մեր վոչ մի կոլխոզն ել դեռ չի կարող պար-  
ծենալ իր աշխատանքների իդեալական կազմա-  
կերպմամբ: Իսկ աշխատանքի կազմակերպումը  
դա ամենակարևոր գործն ե կոլխոզում: Նախ  
պետք ե կոլխոզի բոլոր աշխատունակները համե-  
րաշխ դուրս գան աշխատանքի: Անպայման նա-  
յելով զրան՝ վորպես իրենց սեփական աշխա-  
տանքին: Այդ կարելի կլինի անցկացնել — յերբ  
բոլոր կոլխոզները բացի իրենց աշխատանքային  
որացուցային սլաններից, սովխոզների որինա-  
կով. անպայման յերեկոները աշխատանքից հե-  
տո, մյուս որվան (ու բյաղը) աշխատանքի ցու-

ցակը կադմեն։ Վորպեսզի առավոտյան վեր կենալիս իրար չխառնվեն, ինչպես շատ տեղեր նըկատվում եւ կարմիր բանակայինի դիսցիպլինացի բոլոր աշխատողները շարժվեն զեպի աշխատանքի ֆրոնտ։ Դրա հետ պետք է անցկացնել անպայման դործարքալին սիստեմը, ավել վարձատրելով և քաջալերելով բոլոր լավ աշխատողներին։ Բացի այդ ամեն մի աշխատող պետք է խմանա, վոր ինքը կոլխոզի յեկամուտներից ստանում է համաձայն իր աշխատած որերի քանակի իսկ չաշխատելու զեպքում ել նա վոչինչ չի ստանում։

Առաջիկա աշնանը կոլխոզի ամբողջ ուշադրության կենտրոնը պետք է դարձած լինի այդ հարցի վրա։ այն անհանգութելի թերությունները, վոր կան կոլխոզներում, անհրաժեշտ եւ յերեան բերել, կտրել բժշկել, վորպեսզի նրանք ել չկրկնվեն յերբեք։

Անհատական անտեսության հատուկ թափթրփած, ւթյունը, ֆեոդալական շրջանին հատուկ վոխտկալությունը, զյուզացիական անտեսության հատուկ անտրիսիան — կոլտնտեսություն չպետք է բերել, զբանք կուլեկախիլ աշխատանքի ամենատաժեղ խանգարիչներն են, զբանք համար ել կոլեկախիլ աշխատանքը չի սիրում այդ բացե-

րը։ Դրա համար ել կոլեկտիվը պետք ե լե-  
րեան հանի բոլոր թերությունները և շիկացրած  
յերկաթով այրի այն։

Ինքնաքննադատության զենքը պետք ե ուղ-  
ղված լինի կոլխոզի բոլոր թերությունների դեմ։  
Նրա բոլոր սեկցիաները, բոլոր բրիգադները,  
ամեն մի կոլխոզիկ պետք ե հաշվետու լինի  
կոլխոզի առաջ։ Ամեն մի կոլխոզիկ պետք ե ա-  
ռաջ շարժվի կոլլեկտիվ մասսայի հետ նրա ու-  
ժեղ ինքնաքննադատության տակ։ Յերբեք չը-  
պետք ե թույլ տալ ինքնաքննադատության հը-  
զոր զենքը ժանգումվի, միաժամանակ հականար  
ված հասցնելով բոլոր այն խորթ տրամադրու-  
թյուններին և գործնական ակտերին, վորոնք գա-  
լիս են աջից և թե ձախից։ Դրանք յերկումն ել  
կոլխոզներում դասակարգալին թշնամու, կուլա-  
կը, դաշնակի, հետախույզներ են, վորոնք ամե-  
նից շատ յերկում են զյուղում, նույնպես և կոլ-  
խոզում։


Լենինի կուսակցության ղեկավարությամբ,  
բանվոր դասակարգից տրված ինքնաքննադա-  
տության զենքերով զինված բոլոր կոլխոզները  
սոցիալիզմի ճանապարհով, թող առաջ շարժվեն.  
ղեպի համատակած կոլլեկտիվացումը։


## 10. ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԿԱՄՊԱՆԻԱՆԵՐԸ

Մեր կոլլեկտիվները պետք եւ ամբանան և աճեն մասսայական կամպանիաների հաջող և արագ տանելով։ Զի կարելի յէրբեք պատկերացցնել ուժեղ կոլխոզը առանց աշնանացանի կամպանիայի որինավոր կատարման։ արդ գծով նախառեաված պլանների ճշգրիտ լուծման ու գերակատարման։ Ի՞նչ կոլխոզ, յէրբ նրա մի տարվա աշխատանքի բերքը անփուլթ և դանդաղ շարժվելով կթողնի ձյան տակ. ինչպես բամբակը, խաղողը, ծխախոտը և այլն։ Ի՞նչ կոլխոզ և կոլխոզնիկը յէրբ բերքի ավելցուկները փոխանոկ մթերող որդաններին տալու, զավողն ու ֆարբիկան ուժեղացնելու, շուկա իւ վազում առեսուր անելու։ Մթերման ֆրոնտում ինչպես ամբողջ Միությունում, նույնպես և Հայաստանի կոլխոզները պետք եւ լինեն առաջին շարքերում. միայն կամպանիաների արագ և ճիշտ լուծմավ, կարելի կլինի կոլխոզի նոր վերելքը ստեղծել և այն գեկտվարել Ինարկե գրա հակառակը՝ միայն կոլխոզի հետ առեսուր անելով, ոթերելով կոլխոզ կառուցել չի լինի։

Լայն զյուղացիական զանգվածները վճառականորեն շարժվում են զեղի կոլխոզ։

Առաջիկա ամիսներին բոլոր կոլխոզնիկներով և գյուղական ֆրոնտի աշխատակիցներով, համերաշխ լծվենք այդ աշխատանքին, առաջնորդելով գյուղական մասսաներին սոցիալիզմի հաղթական ճանապարհով դեպի համատարած կոլխոզ շինարարությունը:








ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0039606

(064)

ԳԻՒԾ 8 ԿՈՊ. (1 մ.)



!

630



Госиздат ССР Армении  
Эреван — 1930